

## ՀԱՎԵԼՎԱԾ

Հաստատված է ՀՀ կրթության և գիտության  
նախարարի 29 հունվարի 2007թ. N 41-Ա/ Զ հրամանով

### ՀՀ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՏԱՐԻՖԱՌՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ ԸՍՏ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ

#### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կազմի տարիֆատրակավորման բնութագրերը ըստ պաշտոնների հիմք են ծառայում՝
  - սահմանելու աշխատողների պաշտոնային իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը.
  - որակավորման և մասնագիտական հատկանիշների համաձայն՝ իրականացնել կադրային քաղաքականությունը.
  - մանկավարժներին ատեստավորելու համար:
2. Մանկավարժների պաշտոնների անվանումները պետք է համապատասխանեն տարիֆատրակավորման բնութագրերում նախատեսվածներին:
3. Որակավորման տարակարգերը նախատեսված են յուրաքանչյուր մանկավարժական և ղեկավար պաշտոնի համար և հաշվի են առնվում տարիֆային կարգերը որոշելու ժամանակ:
4. Որակավորման տարակարգերը և դրանց շնորհման կարգը որոշվում են ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն:
5. Յուրաքանչյուր պաշտոնի տարիֆատրակավորման բնութագիրը բաղկացած է 3 բաժնից՝
  - ա/ պաշտոնային պարտականությունները.
  - բ/ պետք է իմանա.
  - գ/ որակավորման պահանջները:

«Պաշտոնային պարտականություններ» բաժնում թվարկվում են աշխատողին ներկայացվող պարտադիր մասնագիտական գործառույթները, որոնք հիմք են ծառայում ամեն մի ուսումնական հաստատության համար՝ մշակելու և հաստատելու

պաշտոնային պարտականությունների կոնկրետ ցանկ՝ իր կանոնադրության շրջանակներում:

«Պետք է իմանա» /գիտենա/ բաժինը պարունակում է այն հիմնական պահանջները, որոնք ներկայացվում են աշխատողին մասնագիտական գիտելիքների, օրենսդրական, իրավական և նորմատիվային ակտերի, հրահանգների և այլ ղեկավար ու նորմատիվային փաստաթղթերի վերաբերյալ, ինչպես նաև մեթոդներն ու միջոցները, որոնք պետք է աշխատողը կարողանա կիրառել պաշտոնային պարտականությունները կատարելիս:

«Որակավորման պահանջներ» բաժնում սահմանվում են տարիֆային կարգերը հաշվի առնելով՝

- ա/\_\_\_\_\_ կրթությունը՝ միջին մասնագիտական , բարձրագույն/բակալավր,դիպլոմավորված մասնագետ ,մագիստրոս/ ,
- բ /մանկավարժական և տվյալ պաշտոնում աշխատանքի ստաժը.
- գ/ որակավորման և բարձր մասնագիտական ցուցանիշները:

6. Հավելվածում բերված բնութագրերը տարածվում են բոլոր տիպի՝ նախադպրոցական, հանրակրթական, արտադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողների վրա՝ անկախ ենթակայությունից և սեփականության ձևից:

7. ՀՀ կրթության և գիտության նախարարությունն իրավասու է կատարել փոփոխություններ և լրացումներ տարիֆատրակավորման բնութագրերի ա/ և բ/ բաժիններում:

Բազային /մասնագիտական/ կրթություն չունեցող, բայց բավարար փորձ ու անհրաժեշտ աշխատանքային որակ ունեցող անձինք բացառության կարգով կարող են ստանալ որակավորման տարակարգեր, ատեստավորման միջոցով հավակնել համապատասխան տարիֆային կարգին:

## **ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԸ**

/Բոլոր տիպի ուսումնական հաստատությունների՝ նախադպրոցական, հանրակրթական, արտադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրեններ/:

### **ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ուսումնական հաստատության կանոնադրության և ՀՀ օրենսդրության համաձայն՝ իրականացնում է հաստատության ընդհանուր ղեկավարումը: Ապահովում է հաստատության ուսումնադաստիարակչական և վարչատնտեսական աշխատանքների համակարգումը: Որոշում է հաստատության գործունեության ռազմավարությունը, զարգացման նպատակներն ու խնդիրները, ընդունում որոշումներ այդ աշխատանքների ծրագրային պլանավորման համար: Իրականացնում է հաստատության զարգացման ծրագրի, ուսումնական պլանների, դասընթացների, տարեկան ուսումնական ժամանակացույցի, կանոնադրության, ներքին աշխատակարգի կանոնների մշակումը և ներդրումը: Լուծում է գիտական, ուսումնամեթոդական, վարչական, ֆինանսական, տնտեսական և այլ հարցեր: Պլանավորում, համակարգում և վերահսկում է կառուցվածքային ստորաբաժանումների մանկավարժական և այլ աշխատողների աշխատանքը: Իրականացնում է մանկավարժական կադրերի ընդունելությունը, ընտրությունը և տեղաբաշխումը: Որոշում է աշխատողների պաշտոնային պարտականությունները, ստեղծում պայմաններ նրանց մասնագիտական վարպետության, որակավորման բարձրացման համար: Խրախուսում և խթանում է աշխատողների ստեղծագործական նախաձեռնությունը, աջակցում կոլեկտիվում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորմանը: Ձևավորում է երեխաների համակազմը, ապահովում նրանց սոցիալական պաշտպանվածությունը: Հանդիսանում է որբ, ծնողագուրկ երեխաների խնամքը, պաշտպանում նրանց օրինական իրավունքները և հետաքրքրությունները: Ձեռնարկում է միջոցներ նրանց ազգակցական կապերի ամրապնդման համար: Ապահովում է արդյունավետ համագործակցություն տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, հասարակայնության, ծնողների /նրանց

օրինական ներկայացուցիչների/ հետ: Համագործակցում է օրենսդրությամբ թույլատրված տարբեր միավորումների հետ: Կարգավորում է ՀՀ օրենսդրությամբ թույլատրված հասարակական /այդ թվում՝ մանկական և երիտասարդական/ կազմակերպությունների գործը հաստատությունում: Ապահովում է բյուջետային հատկացումների, հիմնադրի, ինչպես նաև այլ աղբյուրներից ստացված միջոցների արդյունավետ օգտագործումը: Ներկայացնում է հաստատությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններում, այլ կազմակերպություններում: Ապահովում է ուսումնանյութական բազայի պահպանման, համալրման հաշվառումը, սանիտարահիգիենիկ ռեժիմի, աշխատանքի պաշտպանության փաստաթղթերի պահպանությունը: Կրում է պատասխանատվություն՝ ուսումնական պլանին համապատասխան կրթական ծրագրերի իրացման, կրթական գործընթացի, կրթական որակի և բովանդակության, երեխաների կյանքի և առողջության պահպանման, կրթական գործընթացում, սովորողների /սաների/, աշխատողների իրավունքների և ազատության պահպանման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Պետք է իմանա:** ՀՀ Սահմանադրությունը, «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Լիցենզավորման մասին», «Կրթության պետական տեսչության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքները, ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, կրթության ոլորտի վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը և ՀՀ կառավարության որոշումները, մանկավարժության, հոգեբանամանկավարժական գիտության և պրակտիկայի արդի նվաճումները, անձի հոգեբանությունը, դիֆերենցված հոգեբանությունը, ֆիզիոլոգիայի, հիգիենայի հիմունքները, կրթական համակարգերի կառավարումը և մեթոդները, տնտեսական հիմունքները, ֆինանսական, տնտեսական գործունեության կազմակերպումը, վարչական, աշխատանքային և տնտեսական օրենսդրությունը, աշխատանքի պաշտպանության, տեխնիկայի անվտանգության և հակահրդեհային պաշտպանության նորմերն ու կանոնները:

**Որակավորման պահանջները- ա/համապատասխան բնագավառի բարձրագույն մասնագիտական կրթություն .**

**բ/ ձեռնարկատիրական կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն 3 տարվա կամ առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:**

## ՈՒՍՈՒՑԻՉ

/բոլոր մասնագիտությունների ուսուցիչ,  
դաստիարակ/

**Պաշտոնային պարտականությունները:** Պլանավորում և կազմակերպում է սաների կենսագործունեությունը, նրանց ուսուցումն ու դաստիարակությունը՝ կրթության պետական չափորոշիչներին համապատասխան: Կատարում է ամենօրյա աշխատանք նրանց սոցիալ-հոգեբանական վերականգնման և հարմարունակության /ադապտացիայի/ համար: Սաների անհատական առանձնահատկությունների ուսումնասիրման և հոգեբանի հանձնարարականի վրա պլանավորում և անցկացնում է նրանց հետ շտկողական, զարգացման աշխատանք: Բժշկական աշխատողների հետ համատեղ ապահովում է սաների առողջության պահպանումը և ամրապնդումը, անցկացնում նրանց հոգեբանաֆիզիկական զարգացումը խթանող միջոցներ, պատասխանատու է նրանց կյանքի և առողջության համար: Կազմակերպում է սաների օրվա ռեժիմի, տնային հանձնարարությունների կատարումը, օգնում է ուսուցմանը, ժամանցի կազմակերպմանը և լրացուցիչ կրթություն ստանալուն՝ գեղագիտական գիտատեխնիկական, մարզական սեկցիաներում: Սաների տարիքից ելնելով՝ կազմակերպում է ինքնասպասարկման աշխատանք, ապահովում է աշխատանքի պաշտպանության պահանջների պահպանումը: Նպաստում է սաների մոտ որոշակի գործունեության հանդեպ հետաքրքրասիրության բացահայտմանը:

Աշխատանք է տանում երեխաների վարքի շեղման, վնասակար սովորությունների վերացման համար: Նպաստում է կոլեկտիվում ինքնակառավարման տարրերի ձևավորմանը: Ուսումնասիրում է սաների անհատական ունակությունները, հետաքրքրությունները և հակումները, նրանց ընտանեկան և կենցաղային պայմանները: Համագործակցում է սաների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ:

**Պետք է իմանա:** «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքները, դաստիարակչական հարցերը, ըստ ոլորտի կրթության պետական չափորոշիչները, նորմատիվ փաստաթղթերը և մեթոդական հանձնարարականները, մանկավարժության, հոգեբանության, տարիքային

ֆիզիոլոգիայի և հիգիենայի, մինչբժշկական օգնության հիմունքները, դաստիարակչական աշխատանքի տեսության և մեթոդիկայի, աշխատանքային օրենսդրության հիմունքները, աշխատանքի անվտանգության, սաների կյանքի և առողջության պահպանման կանոնները:

**Որակավորման պահանջներն առանց տարակարգի՝** միջին մասնագիտական կամ բարձրագույն /բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս/ մասնագիտական կրթություն:

#### **ՀԱՏՈՒԿ ՍԱՆԿԱՎԱՐԺ**

#### **/ՈՒՍՈՒՑԻՉ-ԱՐԱՏԱԲԱՆ, ՈՒՍՈՒՑԻՉ-ԼՈԳՈՊԵՂ, ԼՈԳՈՊԵՂ/**

**Պաշտոնային պարտականությունները:** Կազմակերպում է, իրականացնում ուսումնաշտկողական աշխատանքներ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաների հետ: Հետազոտում և գնահատում է երեխաների արատի արտահայտված աստիճանը: Պարապմունքների համար խմբերը կոմպլեկտավորում է՝ հաշվի առնելով երեխաների հոգեֆիզիկական վիճակը: Խմբակային ու անհատական պարապմունքները անցկացնում է՝ նպատակ ունենալով ուղղել շեղումները, վերականգնել կանխարգելված գործողությունները: Սերտորեն համագործակցում է այլ մասնագետների հետ: Դաստիարակների/ուսուցիչների/ հետ անցկացնում է դասալսումներ և մասնակցում պարապմունքների: Ջարգացման շեղումներ ունեցող երեխաների հետ հատուկ մեթոդներով և եղանակներով աշխատանքներ կազմակերպելու նպատակով մասնագիտական խորհուրդներ է տալիս մանկավարժներին, ծնողներին, նրանց փոխարինողներին: Իր աշխատանքում հիմնվում է մասնագետ բժիշկների հետազոտական տվյալների վրա: Մշտական կապ ունի կրթական հաստատության բուժաշխատողների հետ: Ակտիվ մասնակցում է կրթական գործընթացին՝ ուղղված սաների շեղումների կանխարգելմանը, շտկմանը:

Պետք է ունենա համապատասխան քննական,ուսումնասիրման պարագաներ, ձեռնարկներ և նյութեր հետազոտություններ կազմակերպելու համար:

Ապահովում է պետական կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան՝ սովորողների /երեխաների/ նախապատրաստման մակարդակը և կրում է պատասխանատվություն կրթական ծրագրի ողջ ծավալի իրացման համար:Մասնակցում է մեթոդմիավորումների աշխատանքին,ինչպես նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների անհատական զարգացման ծրագրերի մշակմանը՝ հաշվի առնելով երեխաների զարգացման առանձնահատկությունները,բացահայտում է հուզական, մտավոր զարգացման, վարքային, շփման դժվարություններ ունեցող երեխաներին, նրանց հետ տանում շտկողական,զարգացնող աշխատանքներ:

Իրականացնում է տեխնիկայի անվտանգության և հակահրդեհային պաշտպանության նորմերն ու կանոնները: Կրթական գործընթացի ընթացքում ապահովում է երեխաների կյանքի և առողջության պահպանումը:

**Պետք է իմանա:** «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքները, հատուկ մանկավարժություն, հոգեբանություն, արատաբանության, անատոմիաֆիզիոլոգիական և կլինիկական հիմունքներ, երեխայի զարգացման շեղումների ուղղման, կանխարգելման մեթոդները, ձևերը, մասնագիտական և պրակտիկ գործունեության վերաբերյալ նորմատիվային ու մեթոդական փաստաթղթերը, ծրագրամեթոդական գրականությունը, արատաբանության նորագույն նվաճումները, աշխատանքի պաշտպանության, տեխնիկայի անվտանգության և հակահրդեհային պաշտպանության նորմերն ու կանոնները:

**Որակավորման պահանջներն առանց տարակարգի -բարձրագույն/բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս/ մասնագիտական կրթություն:**

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺ, ՀՈԳԵԲԱՆ

**Պաշտոնային պարտականությունները:** Ուսումնական հաստատությունում աշխատանքներ է տանում դեռահասների և երեխաների հոգեկան առողջության և անձի զարգացման ապահովման ուղղությամբ: Հայտնաբերում է երեխայի անձի կայացումը դժվարացնող պայմանները և հոգեկանխորոշման, հոգեախտորոշման, հոգեշտկման, խորհրդատվության և վերականգնողական միջոցներով օգնում է երեխաներին, մանկավարժներին, ծնողներին, կամ նրանց օրինական ներկայացուցիչներին՝ անձնային, մասնագիտական և այլ կոնկրետ պրոբլեմների լուծման գործում: Երեխաների մի տարիքային խմբից մյուսին անցնելիս անցկացնում է սովորելու պատրաստականության հոգեբանամանկավարժական ախտորոշում և ընտրում կամ առաջարկում՝ անձի զարգացման աստիճանին համապատասխան ուսումնական ծրագրեր: Ուսուցչի հետ միասին պլանավորում և մշակում է ուսումնական գործունեության, զարգացնող և հոգեշտկողական ծրագրեր՝ հաշվի առնելով երեխայի անհատական և սեռատարիքային առանձնահատկությունները: Կատարում է մասնագիտական կողմնորոշման աշխատանք, որը նպաստում է երիտասարդության մոտ մասնագիտության ինքնորոյն և գիտակից ընտրությանը՝ հաշվի առնելով նրանց արժեքային կողմնորոշումները, կենսական պլանները և հեռանկարները: Մասնակցում է օժտված երեխաների որոշման, ընտրության և ստեղծագործական զարգացման գործին: Բացահայտում է հուզական և մտավոր զարգացման հետամնաց երեխաներին: Հետազոտում և սոցիալ-հոգեբանական օգնություն է ցույց տալիս մտավոր և ֆիզիկական թերություններ ունեցող երեխաներին: Իրագործում է դեռահասների մոտ ակոհոլիզմի և թմրամոլության կանխարգելման աշխատանքներ, անցկացնում է շեղված և հակահասարակական վարքի հոգեբանական փորձագիտություն, հոգեբանամանկավարժական շտկում: Մասնակցում է հոգեբանամանկավարժական հանձնաժողովի աշխատանքներին, երեխաների և դեռահասների սոցիալ-իրավական պաշտպանության հանձնաժողովների աշխատանքին, աջակցում է զբաղվածության տարածքային ծառայություններին:

Մասնակցում է երեխաների, ուսուցիչների, ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հոգեբանական կուլտուրայի, այդ թվում՝ սեռական դաստիարակության կուլտուրայի ձևավորմանը: Կրթական հաստատությունների ղեկավարներին և աշխատակիցներին խորհուրդներ է տալիս այդ հաստատության զարգացման, երեխաների ուսուցիչների, ծնողների, սոցիալ-հոգեբանական իրազեկության բարձրացման և հոգեբանության գործնական կիրառման ուղղությամբ:

Մասնակցում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների անհատական զարգացման ծրագրերի մշակմանը՝ հաշվի առնելով երեխաների զարգացման առանձնահատկությունները, բացահայտում հուզական ,մտավոր զարգացման,վարքային ,շփման դժվարություններ ունեցող երեխաներին ,նրանց հետ տանում շտկողական,զարգացնող աշխատանքներ:

**Պետք է իմանա:** «Կրթության մասին» ՀՀ օրենքը, «Մարդու իրավունքների և ազատությունների հռչակագիրը», «Երեխայի իրավունքների մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքները, երեխաների, դեռահասների ուսուցման և դաստիարակության մասին նորմատիվ փաստաթղթերը, օրենսդրության հիմունքները, աշխատանքի պաշտպանության, առողջապահության, մասնագիտական կողմնորոշման, բնակչության զբաղվածության և նրա սոցիալական պաշտպանության բնագավառներում, ընդհանուր և մանկավարժական հոգեբանություն, ընդհանուր մանկավարժություն, անձի և դիֆերենցիալ հոգեբանություն, տարիքային և մանկան հոգեբանություն, սոցիալական հոգեբանություն, բժշկական հոգեբանություն /մանկան նյարդահոգեբանություն, պաթոհոգեբանություն, պսիխոմատիկա/, արատաբանություն, հոգեթերապիա, սեքսոլոգիա, մասնագիտական կողմնորոշման և աշխատանքի հոգեբանություն, հոգեախտորոշման, հոգեբանական և մասնագիտական խորհրդատվության ,հոգեպրոֆիլակտիկայի հիմունքները, ակտիվ ուսուցման, շփման, սոցիալ-հոգեբանական տրենինգի, երեխայի բնական և ոչ բնական զարգացման կանխորոշման և շտկման մեթոդները:

**Որակավորման պահանջներն առանց տարակարգի- միջին մասնագիտական ,բարձրագույն/բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս/ մասնագիտական կրթություն:**

## **ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍԵԹՈՂԻՍ**

**Պաշտոնային պարտականությունները:** Կազմակերպում է ուսումնական հաստատության մեթոդական աշխատանքը, վերլուծում ուսումնական հաստատության ուսումնամեթոդական և դաստիարակչական աշխատանքը: Առաջարկություններ է ներկայացնում կրթական գործընթացի և մեթոդական աշխատանքի արդյունավետության բարձրացման համար: Համակարգում է մեթոդական նյութերը և կազմում տեղեկատվական նյութեր: Կատարում է մասնագետներ վերապատրաստելու

համար կանխատեսման և պլանավորման աշխատանքներ, մշակում է կոնկրետ մասնագիտությունների համար ուսումնական պլաններ: Կազմակերպում է ուսումնամեթոդական փաստաթղթերի, ձեռնարկների, ուսումնական առարկաների, սարքավորումների և դիդակտիկ նյութերի տիպային ցանկից բխող նյութերի համակարգման աշխատանքները: Վերլուծում և ընդհանրացնում է ուսումնական հաստատության փորձնական աշխատանքի արդյունքները: Ընդհանրացնում և միջոցներ է ձեռնարկում ուսումնական հաստատության ղեկավարների և մանկավարժական աշխատողների արդյունավետ փորձը տարածելու համար: Կազմակերպում և կոնկրետացնում է մեթոդիավորումների աշխատանքը: Մշակում է մրցույթներ, ցուցահանդեսներ, օլիմպիադաներ, հավաքներ, ստուգատեսներ անցկացնելու համար անհրաժեշտ փաստաթղթեր: Ուսումնական հաստատությունների, ստորաբաժանումների, ուսումնամեթոդական, մեթոդական կաբինետների, կենտրոնների ղեկավարներին և մանկավարժական աշխատողներին խորհրդատվական և գործնական օգնություն է ցույց տալիս ուսումնական, մեթոդական և դաստիարակչական աշխատանքներ կազմակերպելու համար: Մասնակցություն է ունենում դասագրքերի, ուսումնական ձեռնարկների հեռանկարային պլանների քննարկման մշակման գործընթացին: Ընկալում և հաղորդում է ուսուցման և դաստիարակության առաջավոր տեխնոլոգիաները: Ուսումնասիրում է ուսումնական հաստատությունների տեսալսողական միջոցների պահանջարկը և գործող ֆոնդի վիճակը:

**Պետք է իմանա:** «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Լիցենզավորման մասին», «Կրթության պետական տեսչության մասին», «Լեզվի մասին» ՀՀ օրենքները, ուսումնական հաստատության կանոնադրությունը, և այլ նորմատիվային փաստաթղթեր, դիդակտիկայի սկզբունքները, մանկավարժության և տարիքային հոգեբանության հիմունքները, դասավանդման մեթոդները, կրթական հաստատություններում ուսուցման գործընթացի կազմակերպման համակարգը, ուսումնածրագրային փաստաթղթերի, առարկայական ուսումնական պլանների, կրթական ծրագրերի, սարքավորումների օրինակելի ցանկերի և այլ ուսումնամեթոդական փաստաթղթերի մշակման սկզբունքները և կարգը, կրթական հաստատություններում մանկավարժական աշխատանքի արդյունավետ ձևերի և մեթոդների հայտնաբերման, ընդհանրացման և տարածման մեթոդիկան, կրթական հաստատություններում մեթոդիավորումների աշխատանքի բովանդակության և կազմակերպման սկզբունքները, ՀՀ աշխատանքային օրենսդրությունը, աշխատանքի

անվտանգության, սաների կյանքի, առողջության պաշտպանության կանոնները և նորմերը:

**Որակավորման պահանջներն առանց տարակարգի-բարձրագույն/բակալավր, դիպլոմավորված մասնագետ , մագիստրոս/ մասնագիտական կրթություն**

### **ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿ /ՂԵԿԱՎԱՐ/**

**Պաշտոնային պարտականությունները:** Նպաստում է երեխայի երաժշտական ընդունակությունների և զգացմունքների ներաշխարհի զարգացմանը, գեղագիտական ճաշակի ձևավորմանը, դրա համար օգտագործելով երաժշտական գործունեության կազմակերպման բոլոր ձևերը և տեսակները: Խթանում է նախադպրոցական տարիքի երեխաների ստեղծագործական գործունեության զարգացումը: Ապահովում է այդ հարցերում նախադպրոցական հաստատության մասնագետների և ծնողների /կամ նրանց օրինական ներկայացուցիչների/ համագործակցությունը: Որոշում է մանկավարժական գործունեության ուղղվածությունը՝ ըստ երեխաների անհատական և տարիքային առանձնահատկությունների, ինչպես նաև ըստ նրանց ստեղծագործական ընդունակությունների, այդ նպատակի համար օգտագործելով երեխայի զարգացման բոլոր հնարավորությունները:

**Պետք է իմանա** «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքները, նախադպրոցական տարիքի երեխաների երաժշտական դաստիարակության և ուսուցման մեթոդիկան, ունենա հոգեբանամանկավարժական տարրական պատրաստվածություն /իմանա երեխայի անձի տարիքային և անհատական զարգացման, ինչպես նաև տարբեր տարիքի երեխաների երաժշտական դաստիարակության, զգայական ընկալումների և երաժշտական կարողությունների առանձնահատկությունները, մանկական երաժշտական ստեղծագործությունները, մասնագիտորեն տիրապետի երաժշտական գործիքի վրա կատարման տեխնիկային:

**Որակավորման պահանջներն առանց տարակարգի-միջին մասնագիտական կամ բարձրագույն /բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս/ մասնագիտական կրթություն:**

**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ՀՐԱՀԱՆԳԻՉ  
/ՄԱՐԶԻՉ, ՄԱՆԿԱՎԱՐԺ/**

**Պաշտոնային պարտականությունները:** Կրթական ծրագրերին համապատասխան երեխաների հետ տանում է ֆիզիկական դաստիարակության աշխատանքներ: Որոշում է պարապմունքների խնդիրները և բովանդակությունը՝ հաշվի առնելով երեխաների տարիքը, պատրաստվածությունը, անհատական և հոգեբանական առանձնահատկությունները: Երեխաներին ուսուցանում է տիրապետել վարժությունների կատարման տեխնիկային և հմտություններին, ձևավորում է նրանց բարոյականային որակները: Ապահովում է երեխաների անվտանգությունը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պարապմունքների ժամանակ: Յուրյ է տալիս առաջին մինչքժշկական օգնություն: Մշտապես հետևում է պարապմունքների վայրի սանհիգիենիկ վիճակին և նորմաների պահպանմանը: Բուժաշխատողների հետ համատեղ հսկում է երեխաների առողջության վիճակը, կարգավորում նրանց ֆիզիկական անբավարարությունը: Պատասխանատու է երեխաների կյանքի, առողջության համար:

**Պետք է իմանա:** Մանկավարժություն, հոգեբանություն, տարիքային ֆիզիոլոգիա, անատոմիա, սանիտարական գործ, հիգիենա, մարզագործիքների վրա ուսուցման մեթոդիկական, լողի ուսուցման մեթոդիկական ըստ տարիքային խմբերի, ջրում մնալու կանոնները, անվտանգության տեխնիկայի պահանջները, ֆիզկուլտ-առողջարարական միջոցառումների անցկացման ժամանակ, ֆիզիկական զարգացման շեղում ունեցող երեխաների հետ աշխատելիս՝ արատաբանություն հիմունքները և համապատասխան մեթոդիկական:

**Որակավորման պահանջներն առանց տարակարգի-միջին մասնագիտական կամ բարձրագույն/բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս/ մասնագիտական կրթություն:**

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻՒ՝ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԾՈՎ ՏԵՂԱԿԱԼ**

**ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Կազմակերպում և ղեկավարում է սովորողների դաստիարակչական, արտադաստրանական, ներդպրոցական, արտադպրոցական աշխատանքներն ու դասղեկների գործունեությունը: Ապահովում է հաստատության և ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը: Կազմակերպում է սովորողների հանգիստն ու ժամանցը, տարաբնույթ թեմատիկ միջոցառումներ, կլոր սեղաններ, երկխոսություններ: Ուսումնական հաստատության, նրա ստորաբաժանումների մեթոդական կաբինետների ղեկավարներին և մանկավարժական աշխատողներին գործնական օգնություն է ցույց տալիս ուսումնական, մեթոդական և դաստիարակչական աշխատանքներ կազմակերպելու համար: Նպաստում է հաստատությունում մանկավարժական աշխատողների կողմից տեղեկատվական և հաղորդակցական տեղնուլոգիաների հնարավորությունների օգտագործումը: Ընդհանրացնում և միջոցներ է ձեռնարկում սահմանված կարգով, դաստիարակչական գծով մանկավարժական աշխատողների արդյունավետ փորձը տարածելու համար: Համակարգված աշխատանք է տանում սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ, աջակցում դպրոցական ինքնավարությանը, հասարակական վերահսկողությանը: Վերահսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ: Իրականացնում է ազգային մշակութային ժառանգության պահպանման ու զարգացման ուղղությամբ տարաբնույթ միջոցառումներ, նպաստում՝ իրացնելու հանրակրթության միջոցով ազգային փոքրամասնությունների համայնքների լեզվի և մշակույթի զարգացման իրավունքը: Ապահովում է հաստատությունում կրթության

առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար կրթություն ստանալու իրավունքը :

**Պետք է իմանա:** «Կրթության մասին», «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքները, Հանրակրթության պետական կրթակարգը, օրենսդրական և այլ նորմատիվային փաստաթղթերը, սաների կրթության և դաստիարակության հարցերի վերաբերյալ կառավարման տեսությունը, մանկավարժությունը, մանկավարժական հոգեբանության, սոցիոլոգիայի, ֆիզիոլոգիայի, հիգիենայի հիմունքները:

**Որակավորման պահանջներն առանց տարակարգի-բարձրագույն/բակալավր, դիպլոմավորված մասնագետ,մագիստրոս/ մասնագիտական կրթություն**

## **ԼՐԱՅՈՒՑԻՉ ԿՐԹՈՒԹՅԱՆ /ԱՅԴ ԹՎՈՒՄ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ/ ՄԱՆԿԱՎԱՐԺ**

**Պաշտոնային պարտականությունները:** Իրականացնում է սովորողների /սաների/ լրացուցիչ կրթությունը, զարգացնում նրանց տարաբնույթ ստեղծագործական գործունեությունը: Սաներից կոմպլեկտավորում է սեկցիայի, համույթի, ստուդիայի, մանկական տարբեր միավորումների խմբակի կազմը, ձեռնարկում է միջոցներ՝ ուսուցման տևողության ժամկետը, նրանց կազմը պահպանելու համար: Ապահովում է ուսուցման ընթացքում աշխատանքի մեթոդների ձևերը, միջոցների ընտրության մանկավարժական հիմնավորումը: Ապահովում է երեխաների /սաների/ իրավունքների և ազատության պաշտպանությունը: Մասնակցում է կրթական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը, կրում է պատասխանատվություն՝ դրանց կատարման որակի, երեխաների կյանքի և առողջության պահպանման համար: Բացահայտում է սովորողների ստեղծագործական ընդունակությունները, նպաստում դրանց զարգացմանը, մասնագիտական նախասիրությունների և հակումների ձևավորմանը: Աջակցում է օժտված և տաղանդավոր երեխաների, ինչպես նաև հատուկ կարիքներով երեխաների զարգացմանը: Կազմակերպում է խորհրդատվական օգնություն ծնողներին /նրանց օրինական ներկայացուցիչներին/, ինչպես նաև մանկավարժական աշխատողներին իր իրավասության սահմաններում: Պարապմունքների ընթացքում ապահովում է աշխատանքի պաշտպանության, տեխնիկայի անվտանգության և

հակահրդեհային պաշտպանություն նորմերը, կանոնները, մասնակցում է մեթոդական միավորումների աշխատանքներին, բարձրացնում է իր մասնագիտական որակավորումը:

**Պետք է իմանա** «Կրթության մասին» ՀՀ օրենքը, կրթության ոլորտի օրենսդրությունը, տարիքային և հատուկ մանկավարժության, հոգեբանության հիմունքները, հիգիենայի, երեխաների /սաների/ հետաքրքրությունների և պահանջմունքների զարգացման առանձնահատկությունը, գիտատեխնիկական, գեղագիտական, տուրիստական, բնապահպանական առողջարարական, մարզական, ժամանցային խմբակների գործունեության մեթոդիկան, կազմակերպումը, մանկական կոլեկտիվների, կազմակերպությունների գործունեության հիմունքները, աշխատանքի պաշտպանության, տեխնիկայի անվտանգության հակահրդեհային պաշտպանության նորմերը և կանոնները:

**Որակավորման պահանջներն առանց տարակարգի-միջին մասնագիտական կամ բարձրագույն/բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս/ մասնագիտական կրթություն:**

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳԾՈՎ, /Ն/Գ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԻՄՍ՝ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳԾՈՎ ՏԵՂԱԿԱԼ/**

**Պաշտոնային պարտականությունները:** Կազմակերպում է մանկավարժական կոլեկտիվի գործունեության ընթացիկ և հեռանկարային պլանավորումը: Համակարգում է ուսուցիչների, դաստիարակների և այլ մանկավարժական աշխատողների աշխատանքը ուսումնական պլանների, կրթական ծրագրերի կատարման, ինչպես նաև ուսումնամեթոդական փաստաթղթերի մշակման ուղղությամբ: Իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքների մեթոդական ղեկավարումը, ապահովում կրթության կառավարման լիազոր մարմնի կողմից մեթոդական հանձնարարականների կատարումը:

Իրականացնում է կրթական և դաստիարակչական գործընթացների որակի նկատմամբ հսկողություն՝ սովորողների /երեխաների/ ուսուցման նախապատրաստման արդյունքների գնահատման օբյեկտիվության, խմբակների,

նախասիրական պարապմունքների, կրթական ծառայությունների գործունեության նկատմամբ:

Համակարգում է փոխհամագործակցությունը մանկավարժական գիտության և պրակտիկայի միջև: Մանկավարժական անձնակազմին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտության և տեսության, ինչպես նաև ծրագրամեթոդական նորություններին: Կազմակերպում է ծնողների շրջանում մանկավարժական աշխատանք:

Ցուցաբերում է օգնություն՝ մանկավարժական աշխատողներին նորարարական ծրագրերի և տեխնոլոգիաների մշակման և յուրացման հարցում: Կազմակերպում է հսկողություն՝ սովորողների /սաների/ ուսումնական պարապմունքների նկատմամբ: Կազմում է ուսումնական պարապմունքների, ուսումնական և դաստիարակչական /այդ թվում՝ մշակութային, ժամանցային/ գործունեության ժամանակացույցը /դասացուցակը/: Ապահովում է հաշվետվական, տեղեկատվական փաստաթղթերի ժամանակին ներկայացումը:

Ցուցաբերում է օգնություն՝ սովորողներին /սաներին/ մշակութային, կրթական, լուսավորչական, առողջարարական միջոցառումների անցկացման ժամանակ: Իրականացնում է համակազմի համալրումը, ձեռնարկում միջոցներ սովորողների, խմբակների սաների համակազմի պահպանման ուղղությամբ: Մասնակցում է մանկավարժական կադրերի ընտրության և տեղաբաշխման աշխատանքներին, կազմակերպում նրանց մասնագիտական վարպետության և որակավորման բարձրացման աշխատանքները: Ներկայացնում է առաջարկություններ կրթական գործընթացի կատարելագործման ուղղությամբ: Ձեռնարկում է միջոցներ՝ ուսումնական լաբորատորիաները, կաբինետները, արհեստանոցները սարքավորումներով հագեցնելու, գրադարանի հարստացման, մեթոդական կաբինետները դիդակտիկ պարագաներով ու դիտողական նյութերով, ուսումնամեթոդական գրականությամբ, ամսագրերով համալրելու ուղղությամբ: Իրականացնում է հսկողություն սովորողների /սաների/ բժշկական սպասարկման գործի նկատմամբ:

**Պետք է իմանա:** «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին» «Կրթության պետական տեսչության մասին», «Լիցենզավորման մասին», «Լեզվի մասին» ՀՀ օրենքները, «Կրթակարգը», կրթության ոլորտին առնչվող օրենսդրությունը, արտադպրոցական կրթադաստիարակչական հաստատության օրինակելի կանոնադրությունը, մանկավարժական հոգեբանության, հոգեբանամանկավարժական գիտության և պրակտիկայի, ֆիզիոլոգիայի, հիգիենայի հիմունքները, կրթական

համակարգերի ղեկավարման տեսությունը և մեթոդները, հաստատության ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ օրենսդրությունը, աշխատանքի պաշտպանության նորմերն ու կանոնները, անվտանգության տեխնիկայի հակահրդեհային նորմերն ու կանոնները:

**Որակավորման պահանջներն առանց տարակարգի-բարձրագույն /բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս/ մասնագիտական կրթություն, ոչ պակաս 3 տարվա մանկավարժական աշխատանքի ստաժ:**

### **ԿՈՆՑԵՐՏՍԵՅՍՏԻ /ԽՄԲԱՎԱՐ/**

**Պաշտոնային պարտականությունները:** Մշակում է ուսուցիչների, դաստիարակների հետ ընդհանուր, հատուկ և մասնագիտացված ճյուղերի թեմատիկ պլանները, ծրագրերը, վարում է երեխաների հետ անհատական և խմբակային պարապմունքներ:

Ձևավորում է սովորողների մոտ կատարողական հմտություններ, սերմանում համայնային էլույթների կարողություններ և հմտություններ, ընդլայնում երաժշտական կերպարային և անհատական ստեղծագործական պատկերացումները: Նպաստում է նրանց մոտ գեղարվեստական ճաշակի զարգացմանը, դաստիարակությանը: Ապահովում է երաժշտական նյութի պրոֆեսիոնալ կատարումը, դասերի, համերգների ,քեմադրությունների, տոնակատարությունների, հանդիսությունների, սպորտային զանազան միջոցառումների ժամանակ վերադաշնակում է /մի ժանրից մյուսը փոխադրում է/ երաժշտական ստեղծագործությունները:

**Պետք է իմանա:** Կրթության մասին օրենսդրությունը, իրավական, նորմատիվ ակտերը, առարկայի ուսուցման և դաստիարակության մեթոդիկական, ծրագրերը, ձեռնարկներն ու դասագրքերը, տարբեր դարաշրջանների ստեղծագործությունները, ոճերն ու ժանրերը , պարապմունքների փորձերի անցկացումը, մանկավարժության և հոգեբանության հիմունքները, երաժշտական հատվածների /ֆրագմենտների/ հորինումը, առանձին շարժումների համար երաժշտության ընտրությունը՝ երեխաների անհատական և ֆիզիկական տվյալների հաշվառմամբ, աշխատանքի պաշտպանության ,տեխնիկայի անվտանգության և հակահրդեհային պաշտպանության նորմերն ու կանոնները:

**Որակավորման պահանջներն առանց տարակարգի -միջին մասնագիտական կամ բարձրագույն/բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս/մասնագիտական կրթություն:**

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՍՏ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

*/ Բոլոր տեսակի նախադպրոցական հաստատություններ՝ ըստ ՀՀ նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ ՀՀ համայնքային ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության, բացի ոչ պետականից/*

Մինչև 6 խումբ ունեցող-----3-րդ կարգ

6-ից մինչև 12 խումբ ունեցող-----2-րդ կարգ

12-ից ավելի խումբ ունեցող-----1-ին կարգ

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԿԱՐԳԵՐԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

- Որակավորման 2-րդ տարակարգի դեպքում՝ բազային աշխատավարձի 5 %-ի հավելավճար
- Որակավորման 1-ին տարակարգի դեպքում՝ բազային աշխատավարձի 10 %-ի հավելավճար
- Ծանոթություն-«վաստակավոր ուսուցչի» կոչման դեպքում դասակարգման չափանիշը հավասարեցվում է որակավորման 1-ին տարակարգին

| <b>Կազմակերպությունների ըստ վարձատրության խմբերի դասակարգման չափանիշները</b>  | <b>1-ին կարգ</b> | <b>2-րդ կարգ</b> | <b>3-րդ կարգ</b> |  |
|---|------------------|------------------|------------------|--|
| <i><b>Տնօրեն, տնօրենի տեղակալ ուս գծով մանկավարժական անձնակազմ</b></i><br>1-ին տարակարգ,<br>«վաստակավոր ուսուցիչ».<br>2-րդ տարակարգ |                  |                  |                  |  |
| <i><b>կրթությունը, ստաժը</b></i>  | 15 տարի և ավելի  | 1-15 տարի        | 1 տարի           |  |
| բարձրագույն   |                  |                  |                  |  |
| միջին մասնագիտական  |                  |                  |                  |  |
| ընդհանուր միջնակարգ   |                  |                  |                  |  |